ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի օգոստոս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 36010.4 մլն դրամ՝ պլանավորված 32900.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 9.5 տոկոսով կամ 3110.4 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 59.8 տոկոսով կամ 13471.7 մլն դրամով, որից 10212.3 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Օգոստոս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4520.1 մլն դրամ՝ պլանավորված 3500.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 29.1 տոկոսով կամ 1020.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 27.4 տոկոսով կամ 972.1 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 94 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 1 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 23 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 32.3 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 17 ստուգում՝ 31.6 մլն դրամ գումարով:

Իրականացված հսկողական միջոցառումների շրջանակներում արձանագրվել են վարձու աշխատողների չձևակերպման 2, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 3 և պակասորդի հայտնաբերման ու ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 1-ական դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 114 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 82-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 18-ը՝ հսկիչ գնումների իրականացման, 6-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 8 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 14 վարչական գործ՝ 40.6 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 5 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 7.6 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 91 վարչական գործով սահմանվել է 1.7 մլն դրամ վարչական տուգանք:

Նախաքննության ընթացքում գտնվող 1 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված 800.0 հազ. դրամի չափով վնասը:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5728 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5188:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 46 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 85 վարձու աշխատողի՝ 12.9 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 52 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգից բխող 2018 և 2019 թվականների միջոցառումների ցանկը և աշխատանքային խմբի կազմը:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Օգոստոսի 22-ից մինչև 25-ը ԱՀ ֆինանսների նախարարության պատվիրակությունը՝ նախարարի գլխավորությամբ, գործուղվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե, որի շրջանակներում կնքվել է ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև 2018-2020թթ. համագործակցության միջոցառումների ծրագիրը, քննարկվել երկու պետությունների հարկային օրենսդրությունների և հարկային մարմինների կողմից իրականացվող վարչարարության ներդաշնակեցմանն ուղղված հարցեր: Այցի շրջանակներում նախարարը հանդիպել է նաև ՀՀ ֆինանսների նախարարի հետ, քննարկել ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնած բարեփոխումները

Արցախում տեղայնացնելու հնարավորություններն ու համագործակցության հետագա ուղղությունները:

Հաշվետու ամսում ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Մշակվել և հանրային քննարկման է ներկայացվել հարկային օրենքների նախագծերի փաթեթը:

Օգոստոս ամսում ֆինանսների նախարարության ու աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի նախաձեռնությամբ հաշվապահական և հարկային հաշվառման թեմաներով կազմակերպվել են սեմինար-դասընթացներ, որոնց մասնակցել են շինարարության, էներգետիկայի և հանքարդյունահանման ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների հաշվապահները:

Հրատարակվել է «Հարկեր, տուրքեր և վճարներ» օրենքների ամփոփ ժողովածուն, որում ներառվել են առանձին հարկատեսակներին, տուրքերին և այլ պարտադիր վճարներին, ինչպես նաև հարկային վարչարարությանը վերաբերող օրենքները:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 184, ելքագրվել՝ 151 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 6 գրություն: